

Ա Է Ե Տ Ա Բ Ե Բ



“ԹՈՂ ՏՈՒՔ ԲԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՅԻ ԳԱՆ” ԴՈՒԿ • ԺԸ • 16 •

ՀԱՏՈՐ Զ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ. ՆՈՅՏԵՄԲԵՐ 1. 1877.

ԹԻՒ 11.



ԱՆԻԱՏՈՒԹԵԱՆ ՎԱՐՁ

Ձատուած կրնա՞ք տեսնել Ոչ :

Բայց Աստուած կը տեսնէ զձեզ , քանզի Աստուած ամէն բան կը տեսնէ :

Աստուած ի սկզբան ստեղծեց ամէն բան , և ամէն բան կը պահէ ու կը պաշտպանէ : Աստուած ստեղծեց արեգակը , և ամէն օր կուտայ աշխարհի անոր լոյսը : Աստուած ստեղծեց անձրեւը , և կը տեղայ զայն երբ որ կ'ուզէ : Աստուած ստեղծեց հովը , և հովը կը փչէ անոր հրամանաւ : Սիրելի տղաս , քեզ ալ Աստուած ստեղծեց , և ողջ առողջ կը պահէ :

Դուն փոքրիկ մարմին մը ունիս , Գլխէդ մինչեւ ոտուններդ մարմին կ'ըստի : Մարմնդ կենդանի է : Ամէն բան ալ կենդանի է : Ոչ : Քարերը կենդանի չեն : Բայց դուն քարերու պէս չես :

Ձեռքդ քարի մը դպցուր : Քարը պաղ է : Քու փոքրիկ մարմնդ տաք է : Ձայն տաք պահողն ո՞վ է : Աստուած : Աստուած երկինքն է , բայց երկինքէն կը նայի երկիր , և քեզ կենդանի կը պահէ :

Ձեռքդ բերնիդ բռնէ : Բերնէդ դուրս ի՞նչ կ'ելլէ : Ծունչդ : Միշտ կը շնչես : Գնոյ մէջ ալ կը շնչես : ուղես չուզես շունչ առնելու ես : Քեզի շունչը տուողն ո՞վ է : Աստուած :

Ամէն բան շինողն Աստուած է : Աստուած այս փոքր մարմնը քեզի տուաւ , և կենդանութիւն , շարժում և շունչ պարզ և եց անոր : Մարմնոյդ մէջ կան նաև ոսկերք : Աստուած ոսկրները

ԵՐԿՐԱԳՈՐԾԻՆ ՁԻՆ
Վերի պատկերն ինքնին գեղեցիկ է , բայց անոր գեղեցկութիւնը յայնմ է մանաւանդ , որ անանոյ մը ցուցուած գթութիւնը կը նկարագրէ : Երկրագործին ձին բոլոր օրն աշխատելն ետքը , իրիկուան յոգնած տուն դարձած է , և տէրն անոր ստեղծին և շողգամ կու տայ ուտելու : Ստեղծինն ու շողգամը ձիերուն շաքարն են :

Երկրագործն ու կինը ձիուն քով կայնած անոր ուտելուն կը նային , և տեսնելով որ ձին այս քաղցր ուտելիքէն կ'ախորժի , կ'ուրախանան :

Ձին անտարակոյս իւր տէրերը կը սիրէ , և գործի ատեն աղէկ կ'աշխատի ,

քանզի անոր տէրերն ալ զանի կը սիրեն , և երբեմն անոր այսպիսի համեղ կեր . կուրներ կու տան :

ՆԱՄԱԿԻ ԱՌ ՓՈՔԻ ՏՂԱՔՍ

1

ՄԱՐՄՆՈՅ ՎՐԱՑ

ՍԻՐԵԼԻ ՏՂԱՔՍ , արեգակը տեսած էք երկինքը : Ո՞վ գրած է արեգակը հոն : Աստուած :

Կրնա՞ք հասնիլ հոն ուր է արեգակը : Ոչ :

Ո՞վ արեգակը կը բռնէ որ վար շինայ : Աստուած :

Աստուած երկինքն է , երկինք բարձրագոյն է քան զարեգակը :

հաստատուն և պինդ շինած է : Ոսկրներէն ոմանք բաղկաց համար են , ոմանք ալ սրունից համար : կռնակիդ համար ոսկր մը կայ , կողերուդ համար ալ ուրիշ կարգ մը ոսկրներ կան :

Աստուած մտով պատած է ոսկրները : Միտդ կակուղ և տաք է : Մսիդ մէջ արիւն կայ : Աստուած մորթով մը պատած է մարմնիդ դուրսի կողմը : Այս մորթը վերարկուի պէս կը ծածկէ միտդ և արիւնդ : Ասոնց բոլորը , այսինքն ոսկր և միս և արիւն և մորթ , մարմին կ'ըստին : Աստուած մարմին մը տալով մեծ շնորհք ըրած է քեզի :

Ոսկրներդ կը կտորին : Այո . եթէ բարձր տեղէ մը վար իյնաս , կամ եթէ կառքի մը անիւներուն տակ մը նստ , ոսկրներդ կը կտորտին :

Երբ ծանր հիւանդ կ'ըլլաս , մարմինդ կը տկարանայ , դրեթէ մորթէ և ոսկրներէ տրիշ բան չի մնար :

Տեսած ես տղայ մը որ երկար ատեն հիւանդ պառկած է : Ես հիւանդ մանկիկ մը տեսայ . անոր այտերը քու այտերուդ պէս կ'ըր , և բազուկները քու բազուկներուդ պէս դէր չէին : Խեղճ տղուն փոքրիկ մարմնից վրայ դրեթէ ոսկր և մորթ միայն մնացած էր : Աստուած զքեզ առցող , և մարմինդ ողջ ստեղծած է :

Փոքրիկ մարմնիդ վնասուիլ շատ դժուարին է :

Եթէ մարմինդ կրակն իյնայ , կ'այրի : Եթէ անոր վրայ տաք շուրթով փի , կը խաչի : Եթէ խորունկ ջրոյ մէջ իյնայ և իսկոյն դուրս չհանուի , իսկոյն կը հեղձնուս : Եթէ դանակով զարնուի մարմինդ , բոլոր արիւնդ դուրս կը վազէ : Եթէ գլխուդ վրայ մեծ անտուկ մը իյնայ , գլուխդ կը ճզմուի : Եթէ պատահանէ մը վար իյնաս , վիզդ կը կտորի : Եթէ քանի մը օր բնաւ կերակուր չուտես , փոքրիկ մարմինդ կը հիւանդանայ , շնչառութիւնդ կը դադրի , երթալով կը պաղիս և քիչ ետք կը մեռնիս :

Կը տեսնեն որ մարմինդ ո՛րչափ տկար է :

Գուն կրնաս պահել և պաշտպանել մարմինդ հիւանդութենէ և վնասներէ Պարսիս զգուշանալ վտանգներէ . բայց Աստուած միայն կարող է պահել քեզ ամէն վտանգէ , կրակէ եւ ջուրէ , վերքերէ և ամէն տեսակ հիւանդութիւններէ : Աստուծոյ առջեւ ծունր դնելով աղօթելու ես ըսելով . Ո՛վ Տէր , պահէ իմ փոքրիկ մարմինս ամէն տեսակ վտանգներէ :

Աստուած աղօթքդ կը լսէ , և կը պահէ ու կը պաշտպանէ քեզ միշտ :



ՈՒՆԿՆԻՐՆԵՐ

ԿԱՏՈՒՆԵՐՈՒՆ ՔԱՐՈՁ ՄԸ

Գէորդ օր մը եկեղեցի գնաց : Այս առաջին անգամ էր որ Գէորդ եկեղեցի կ'երթար : Այնուհետեւ Գէորդ մերթ իր մօրը , մերթ իր կրտսեր եղբայրներուն , և մերթ իր թուղթէ շինուած ձիուն քարոյ կու տար :

Գէորդ օր մը կատուներուն ալ քարոյ տալ ուզելով , անոնցմէ քանի մը հատը մէկտեղ ժողվեց : Սև կատուն պոչը ետին ամփոփելով նստաւ և հանդարտութեամբ կը նայէր Գէորդայ երեսն ի վեր : Գորշ կատուն քաղաքավարութեամբ քարոյ մտիկ ընելու տհաճութիւն ցուցնելէն ետքը , գնաց սև կատուն քով : Այս երկուքը իրրև եղբարք համեստութեամբ կը նստէին , բայց գորշ կատուն միշտ աւղին անդին կը նայէր : Իսկ փոքրիկ կատուն չափցաւ . արդեօք որ դէթ քաղաքավար երեւնալու համար չուզեց վայր մը նստիլ մտիկ ընել քարոյդ , այլ փախչելու նայեցաւ :

Գանք հիմա Գէորդայ քարոյդին : Գէորդ բացաւ իր գրքը , և սա կերպով սկսաւ քարոյել կատուներուն . « Ամենին գողութիւն ընելու չէք . միշտ լուացուելու և մաքրուելու էք : Չանալու էք մուկերը բռնել . բնաւ մէկուն ձեռքը կամ երեսը ճանկուտելու չէք . Ամէն » : Գէորդայ քարոյն այսպէս կարճ , բայց աղբու էր : Երբէք կատու մը մէկ անգամ նստելով այսչափ ճշմարտութիւն լսած չէ :

« Արդեօք կատուններ ստուգիւ կը հասկնաս մեր խօսքը » :

Երբ « փիսի , փիսի » կ'ըսես , կատուն մտիկ կ'ընէ քեզի և քովդ կու դայ : Որովհետև ամէն անգամ որ կատուն այս ձայնով կը կանչես՝ անոր առջին պատառ մը հաց կամ կտոր մը

միս կը նետես , կատուն այն ձայնը միտքը կը պահէ : Բայց եթէ , ինչպէս որ Գէորդին կ'ըսենք , կատուն ալ ըսենք , « Այս ինչ բանը այսպէս ըրէ , այն ինչ բանը միքներ » , կատուն մեր խօսքը չի կրնար հասկնալ , ուստի և մեր պատուէրը չի կատարեր :

Սակայն տղու մը համար այնպէս չէ : Աստուած ամէն տղու բնէ և դո՛ւ տուած է որպէս զի ծուռն ու շիտակը որոշէ : Նմանապէս Աստուած ամէն տղու տուած է եւ՛ճ , որ զանի կը դռնէ՝ երբ բաքի բան մը կ'ընէ , և կը դատապարտէ՝ երբ չար գործ մը կ'ընէ : Ռեւմն Աստուած տղայմ , ո՛րչափ բան կը սպասէ :

ՓՐԿԻՉ ՄԸ , ՏՂԱՅՈՑ ԱՊԱՒԵՆ

Ութամեայ տղու մը որ ծանր հիւանդ ըլլալով մահուան մօտ էր՝ հարցուցի . « Կարապետ , որովհետև մահը մօտ է , միթէ չե՞ս վախնար անկէ » :

Տղան ինծի սապէս պատասխան տուաւ . « Ոչ , չեմ վախնար , վասն զի կը բաղձամ մեռնիլ և Գրիստոսի հետ ըլլալ . անոր հետ ըլլալք քան ապրիլը լաւագոյն է ինծի համար » :

Հարցումս կրկնելով ըսի . « Ի՞նչպէս գիտես թէ Գրիստոսի հետ պիտի ըլլաս » :

Տղան իմ այս հարցմանս սա պատասխանը տուաւ . « Վասն զի ես փնտռեցի զԳրիստոս և գտայ քանի , և Գրիստոս ըսած է . « Ան որ ինծի կու գայ՝ բնաւ դուրս պիտի չհաննեմ » (Յ.Է. 2 . 37) :

Ճշմարիտ հաւատոյ վրայ տղուն գաղափարը հասկնալու համար դարձեալ հարցուցի . « Գրիստոսի ամէն խօսքին վստահ ես » :

Այս հարցման վրայ տղան դարմանօք երեսս նայելով ըսաւ . « Գրիստոսի խօսքերուն կրնասք չվստահիլ . ես այսպիսի տարակոյս մը մտքիս մէջ բնաւ ունեցած չեմ » : Յետոյ իր տկար գլուխը բարձէն վերցնելով , և արտութեամբ ինծի նայելով ըսաւ . « Տէր քարոյի , եթէ կը կարծես թէ Փրկիչը երբէք մարդ խաբած է , զանի ճանչցած չես » :

Սիրելի տղայք , հաւատալով Գրիստոսի բոլոր խոստումներն հաւատարիմ են , միթէ երջանկութիւն չի՞ պարգեւեր ձեզի :

ԱՄԵՆԱՏՆԱ ԱՉԻ

Քանի մը որ առաջ դրօսանայ համար Մեծ կղզին երթալով ծառերուն հովանոյն տակ կանանչ խոտին վրայ կը նստէինք, Հոն ճաշ ըրինք, և տղայք թռչնոց պէս ամենևին բանի մը համար հոգ չընելով կը վազէին և կը զուարճանային: Ես նստած էի, և դիտակով մը կը նայէի ծովուն վրայի նաւերուն, և Գարգալի ու Բենտիկի ծովագրին վրայ գիւղերն ու ագարակները կը դիտէի:

Մենէ քիչ մը անդին ուրիշ ծառի մը տակ Յոյն ընտանիք մը նստած ճաշ կ'ընէին: Այս ընտանիքին տղոցմէն փոքրիկ աղջիկ մը յանկարծ գոչելով «Ե՛րկի, Ե՛րկի» սափորով մը ճամբէն վար սկսաւ վազել: Այն կողմը նայելով տեսայ որ, այն մարդը զոր աղջիկը կը կանչէր ըսելով, «Ե՛րկի, Ե՛րկի», Նրկիը ըլլալով, իշուն վրայ ջրոյ տակաւներ դրած էր, և ճամբէն վար կ'երթար:

Մինչ փոքրիկ աղջիկը ջուրին սափորովը սկսաւ վազել, անոր կրտսեր եղբայրը, «Ոչ, ջուրը ես պիտի բերեմ» ըսելով աղջկան ետեւէն վազեց և զանի բռնեց: Հոն այս երկու տղոց մէջտեղ կուի մը ծագեցաւ: Երկուքն ալ սափորին մէյմէկ կ'ընէին բռնելով իրարու ձեռքէ յափշտակելու կը ջանային: Տղոց մայրն աղջկանը կը գոչէր, «Գաթերինա, սափորը թող» բայց աղջիկը չէր ուզեր թողուլ: Մայրը տղուն ալ գոչեց, «Եանի, դուն թող սափորը» բայց Եանի ալ մոտիկ չըրաւ, ուստի երկու տղայք ճամբուն վրայ սափորն իրարու ձեռքէ քաշելով կուի կ'ընէին: Այս տղայք ինէ շատ հեռու չէին, բայց և այնպէս զանոնք լաւ դիտելու համար գիտակաւ անոնց կողմն ուղղեցի: Այս միջոցին Եանի տեսնելով որ ես գիտակով անոնց կը նայէի և անոնց կուիը կը դիտէի, շատ ամչցաւ: Տեսայ որ ամօթէն տղուն երեսները կարմրեցան, և յանկարծ կուիը դադարեցնելով, սափորը թողուց, և ջուրը Գաթերինա բերաւ:

Կարծեմ թէ շատ տղայք պիտի ամբնան, եթէ ուրիշ մը տեսնէ անոնց անվայել գործքերը, և եթէ անոնք կուի մէջ ըլլան և ես դիտակաւ անոնց ուղղեմ, անոնք ալ վերոյիշեալ տղուն պէս կարմրելով պիտի դադարեն կուիել:

Սիրելի տղայք, իմ դիտակա ձեր գործքերը չի կրնաք տեսնել: Բայց ձեր միշտ տեսնող սաչք մը կայ: Դի-

չեր և ցերեկ ինչ որ ընէք, Աստուծոյ աչքն անոնց բոլորն ալ կը տեսնէ: Նա յեցէք ուրեմն որ այն աչքը ձեզ երբէք անվայել գործերու մէջ չտեսնէ:



ԳՆՆԵՐԻ ՏՊՈՒՅՐ ՊՈՏԿԵՐ

ՊՈՏԿԵՐ ՏՊՈՒՅՐ ԿԵՐՊՈՂ

Անցեալ ամիս փորագրութեան վրայ խօսեցանք: Փորագրիչ մը որչափ վարժ ըլլայ, հարկ է որ անոր պատկերը տպող անձն ալ տպագրութեան արուեստին մէջ վարժ ըլլայ, ապա թէ ոչ վայրագաբար է փորագրին ճարտարութիւնը: Թերեւս կը կարծէք թէ, երբ պատկերը շարուած գիրերուն հետ կապուելով մասնոց տակ կը դուրսի, տպելը դիւրին բան է: Նախ պատկերին և գիրերուն վրայ մեղան կը քրտուի, թուղթին իր տեղը կը դուրսի, և կակուղ լաթով մը թուղթը գիրերուն առջևը կը բռնուի: Յետոյ երբ մամուլը պնդով կը կոխուի, պատկերն ու գիրերը թուղթին վրայ կ'ելլեն: Բայց կը տեսնես որ թուղթին վրայ տպուած պատկերը չի նմանիր այն պատկերին զոր փորագրիչը դժած է տախտակին վրայ: Տախտակին բարակ և գեղեցիկ գիծերը թուղթին վրայ արատաւոր և անյայտ կը տեսնես:

Այս թերութեան դարման տանելու համար է որ տպագրիչը վարժ և փորձ ըլլալու է տպագրութեան արուեստին: Թերթ մը թուղթ մամուլն լաթին վրայ փակցուելով կը տպուի: Այս տպեալ թուղթին վրայ ետքը ուրիշ թուղթեր ալ կը փակցուին: Յետոյ տպագրիչն ուրիշ օրինակ մ'ալ կը հանէ և այն օրինակին սպիտակ մասերը կը կտրէ: Յետոյ օրինակին այն տեղերուն համեմատ, որ սև պիտի ըլլային բայց արատաւոր և անյայտ եղած են, մանր թուղթի կտորներ կտրելով, զանոնք այն տեղերուն վրայ կը փակցնէ, և դարձեալ ուրիշ օրինակ մը կը հանէ: Լաթին այն տեղերուն վրայ ուր թուղթի կտորուանք կը փակցուին մամուլը ուժով կը կոխուի և բոլոր գիծերը սև կ'ելլեն, իսկ այն տեղերն ուր թուղթի կտորներ չկան թերթը կը կոխուի մամուլը, և գիծերը բայց կ'ելլեն: Եթէ պատկերը տպող անձը վարժ է, շուտով կը տեսնէ թէ թուղթին ուր մասերն աղէկ եղած չեն, և որպէս զի մամուլն այն մասերուն վրայ պնդով կոխուի, գարձեալ թուղթի կտորուանք կը փակցնէ այն տեղերը, և նորէն օրինակ մը կը հանէ: Վերջապէս, երբ պատկերին թէ սև և թէ բաց դիմերը որոշ կ'ելլեն, պատկերը տպուելու պատրաստ կը համարուի: Տպագրիչք պատկերի մը այն տեղերը որ սև պիտի ելլեն՝ երբեմն հինգ կամ վեց կարգ թուղթ կը փակցնեն: Ամենէն աղէկ տպուած պատկերներուն մէջ տեղ կայ որ ինը կտոր թուղթ իրարու վրայ փակցուած է: Որպէս զի փակցուած թուղթի կտորուանք իրենց տեղերը մնան, ամենուն վրայ թերթ մը թուղթ կը փակցուի, և ապա պատկերին տպագրութիւնը յառաջ կը տարուի:

Ասկէ կը տեսնուի որ պատկերի մը տօսախի վրայ փորագրութեան ետքը պատկերը տպելու համար շատ ժամանակ և խելք պէտք են:



ՆՈՏԵ ՊՈՏԿԵՐԻ ՈՐ ԱՂԿԻ ՏՊՈՒՅՐ ԶԷ

ՅԻՄԱՐԱԿԱՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ

Ճամանակաւ թագաւոր մը շատ սիրելի ձի մը ունէր: Օր մը թագաւորին և անոր խեղկատակին մէջտեղ խօսք բացուեցաւ ձիուն վրայ, և թագաւորն այսպէս խօսեցաւ. «Ձիս այնչափ կը սիրեմ որ չեմ գիտեր թէ ինչ պիտի ընեմ երբ մեռնի: Եթէ ձիս մեռնի, անոր մահուան լուրն առաջին անգամ ինձի տուող անձը կախել կուտամ»:

Ճամանակ մը ետքը թագաւորին ձին մեռաւ, և պալատին մէջ ամէն մարդ կը վախճար անոր մահուան լուրը թագաւորին հաղորդել: Վերջապէս պալատականք խեղկատակը համոզեցին նյն չարագոյն չակ լուրը տալ

Թագաւորին : Խեղկատակը թագաւորին սենեակը մտաւ , և ցուցնելու համար թէ շատ ցաւալի բան մը պատահած էր , խոր տխրութեամբ կեցաւ թագաւորին առջեւ :

“ Ի՞նչ ունիս , ինչո՞ւ այդպէս տխուր ես ,” ըսաւ թագաւորը :

Խեղկատակը պատասխանեց . “ Տէր իմ , խեղճ ձիգ . . . : Ո՞հ , սոսկալի լուր . . . ,” և լռեց առանց վերջացընելու խօսքը :

Թագաւորը դարձեալ հարցուց . “ Ի՞նչ պատահեցաւ , չըսես ինձի :

Խեղկատակը պատասխանեց . “ Ո՞հ , Տէր իմ , ի՞նչպէս ըսեմ . մանաւանդ կը շուարիմ , երբ միտքս կը բերեմ թէ երէկ այս ատեն ձիգ ողջ առողջ էր : Ո՞հ , ի՞նչ պիտի ընեմ :” Այսպէս խօսեցաւ , և ցուցուց թէ շատ տխուր էր և չէր կրնար պատմել ինչ որ եղած էր :

Թագաւորն անհամբերութեամբ ըսաւ . “ Հասկցայ , ձիս մեռած է , բայց ինչո՞ւ համար ինձի չէք իմացընել անոր մահը :”

Խեղկատակը քիչ մը ոգի առնելով ըսաւ . “ Այո , Տէր իմ , այնպէս է , բայց քան զայս աւելի գէշ բան մը կայ :

Թագաւորը տեղէն ցամակելով և աւելի վարանելով ըսաւ . “ Ի՞նչ է , ըսէ ինձի , աւելի գէշ ի՞նչ կայ :

Խեղկատակն ըսաւ . “ Աւելի գէշը սա է որ ձին մեռաւ , և ձեր վեհափառութիւնը պիտի կախուի , վասն զի դուք ասկէ առաջ ըսիք թէ կախել պիտի տայիք այն մարդը որ ձեր ձիուն մեռնիլը առաջին անգամ յիշէ ձեր վեհափառութեան առջև . արդ ձիոյն մեռնիլը առաջին անգամ դուք յիշեցիք :”

Խեղկատակն այս խօսքն ըսելով , սկսաւ սենեկին մէջ խաղալ և ցամակել թագաւորին սոսկալի խաղ մը ընելուն համար :

Այս պատմութիւնն այժէկ դաս է անոնց , որ կարծելով թէ այս ինչ և այն ինչ բաները պիտի չըլլան , յիմարական խոստումներ կ'ընեն և կ'ըսեն . “ Եթէ այս բանը պատահի , այսպէս կամ այնպէս պիտի ընեմ ,” մինչդեռ այնպէս ընել անկարելի է առանց : Ժամանակաւ տղայ մը կը պարծենար թէ այս ինչ գետին վրայէն ցատկեց : Ուրիշ տղայ մը ոչ միայն չէր հաւատար տղուն այն խօսքին , այլ և կ'ըսէր . “ Եթէ իմ առջեւս կը ցատկես այն գետին վրայէն , քեզի միլիոն մը դահեկան կուտամ :” Տղան գնաց

գետին մէկ նեղ տեղէն ցատկեց : Այն տղան որ միլիոն մը դահեկան տալ խոստացած էր , առջեւ իր յիմարական խոստումը վրայ :



ՊՕՂՈՍԻԿԻՆ ՈՏՈՒՐՆԵՐՈՒՆ ՀԵՏԵՐԸ

“ Մայրիկ , ձեան վրայ ոտուրներուս հետքերը տես : Ո՞րչափ շատ են . ուր որ դացած եմ” հետքերս թողած եմ : Մէկ—երկու—երեք—չորս—հինգ . և հետքերս այնչափ շատ են որ դիւրին չէ համել զանոնք :”

Այսպէս կը խօսէր Պօղոսիկ , մեր քառամեայ մանուկը : Երբ ձմեռն առաջին անգամ ձիւն տեղալով ամէն կողմ ձերմակ քողով մը պատեց , Պօղոսիկ ձեան զայլուստն ողջունելու համար ուրախութեամբ բակը դնաց , և ձեան վրայ անդին սաղին վազելով առաջին անգամ տեսաւ թէ իր ոտուրներն հետքեր թողած էին ամէն դի , ուր որ ինք գացած էր :

Դուք ալ , փոքր տղայք և աղջկու՞նք որ կիբակնօրեայ դպրոց կ'երթիք , ձեր ոտուրներուն հետքերը կը թողուք : Բայց ոչ թէ ձեան վրայ այլ աշխարհի մէջ : Ո՞րչափ այ մեղքով քալէք , դարձեալ ձեր ամէն քայլն մէկ մէկ հետք կը թողու : Հիմա կը մնայ դիտնալ թէ ձեր քայլերէ գէպի Յիսուս կամ դէպի սատանայ ուղուած են :

Ի՞նչ է ոտքի հետքը : Նշան մը որ կը ցուցնէ թէ այն հետքը ձգող անձն որ կողմ գացած է կամ կ'երթայ : Ամէն անգամ որ դուք կը շանք կիրակնօրեայ դպրոցին մէջ հանդարտ կենալ , ամէն անգամ որ կը ներէք ձեր եղբորը որ թերեւս ձեր գեղեցիկ դաւաղանը կոտորած կամ զմեզին կորցուած է , ամէն անգամ որ քայլք և սիրուն բան մը կը խօսիք , կամ աղօթք մը կ'ուղղէք առ Քրիստոս , որ ձեզի կը սպասէ , հետք մը կը թողուք , որ ամէն մարդու կը ցուցնէ թէ դուք որ ճամբէն կ'երթաք , կը յուսամ թէ ձեր քայլերն առ Յիսուս տանող լուսաւոր ճամբուն մէջ աւանուած քայլեր են :

ՍՈՒՐԲ ԳԻՐԻՔ ԿԱՐԴԱՅՈՂ ՏՂՈՑ ՀԱՄԱՐ ՊԱՏՄԱՌՔԻՆ

Թագաւորի մը պալատը կոչուէր կար . պալատականներն հազար հո-

գի , սյր և կին , թագաւորին հետ կ'ուտէին և կը խմէին : Ո՞րչափ աւելի կ'արբենային , այնչափ աւելի կը վարանէին իրենց աստուածները : Թագաւորը յանկարծ խորհուրդ մը յղացաւ , և սկսաւ իսկոյն անոր գործադրութեանը ջանալ : Հրամայեց որ վերջին անգամ նուաճուած երկրէն առնուած ոսկեղէն և արծաթեղէն անօթները բերուին : Այս հրամանն իսկ և իսկ կատարուեցաւ . անօթները բերուելով բաժնուեցան բոլոր կոչակաւաց և խրախուժիւնը նոր եղանդեամբ յառաջ տարուեցաւ : Մինչ աւանդն այսպէս ուրախութեան մէջ էին , թագաւորն յանկարծ ահիւ և դողութեամբ ցատկեց տեղէն : Ոսկեղէն բաժակը ձեռքէն ինկաւ սեղանին վրայ , լեզուն սկսաւ դողդողալ , երեսին գոյնը նետեց : Իր երկիւղին պատճառը պալատականաց իմացնելու համար թագաւորն աչքը անկած կը նայէր սենեկին մէկ կողմը :

Պոչնականք ի նչ տեսան հոն : Այս թագաւորն ո՞վ էր : Թագաւորին հրամանաւ կոչոււնքին տեղը բերուած ոսկեղէն և արծաթեղէն անօթներն ի՞նչ անօթներ էին : Այս պատմութիւնն ո՞ր գրուած է :

ԱՆՅԵԱԼ ԱՄՍՈՑ ՀԱՆԵԼՈՒԿԻՆ ՊԱՏՄԱՌՔՆ

1. Գեղեցիկ	5. Յեռու
2. Մարայ	6. Քահանայ
3. Հով	7. Ուշ
4. Խոմբ	8. Մէր
	9. Այգ

Այս բառերուն մէջ տեղի գրերը կը կազմեն ԵՐՈՒՍՏՂԵՄ անունն որ հանելուկին պատասխանն է :

Ա. Ի. Տ. Ա. Բ. Ե. Բ. ԳԻՐՆԵՐԸ

Ամսական Աւետարանին գինն է փոսթայի ծախքով տարին 1/3 արծաթ մէծիտիյէ կանխիկ , և մէկ թերթը 30 փարա է :

Շաբաթական Աւետարանին գինն է փոսթայի ծախքով տարին 1/2 արծաթ մէծիտիյէ կանխիկ :

Ամերիկայի միսոնարաց ընկերութեան կողմէն Խմբագիր ձ. Բ. Կրիս Տիլմանըրար եղբուշու , Ամերիկան իան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 3947101-ԲԻՆ Ա. ՅԱՅՈՐ 90002626